ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 79-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 79-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.12 կետը՝ ինչպես նաև ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 79-Ն հրամանի 1-ին կետով հաստատված Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներում և նորմատիվներում (այսուհետ՝ գործակիցներ և նորմատիվներ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

- գործակիցների և նորմատիվների 2-րդ «մեթոդ միավորման» բառերը փոխարինել «մեթոդական միավորի» բառերով,
- գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի ա, բ և գ մասերը «դեպքում՝» բառից հետո լրացնել «գործող մեթոդական միավորների քանակին համապատասխան, բայց» բառերով,
- գործակիցների և նորմատիվների 2-րդ կետը լրացնել նոր 3.1) ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1) Հաստատությունում նախնական զինվորական պատրաստության և(կամ) անվտանգ կենսագործունեության ուսուցչի (զինղեկի) հաստիք նախատեսվում

է.

ա. **Ավագ դպրոցներում (նաև՝ մասնագիտացված և հատուկ դպրոցներում)՝**

- 0,5 հաստիքային միավոր՝ մինչև 4 դասարանների միջին տարեկան թվի դեպքում,

- 1 հաստիքային միավոր՝ 4 և ավելի դասարանների միջին տարեկան թվի դեպքում։

բ. **Հիմնական դպրոցներում (նաև՝ միջին դպրոցներում)՝**

- 0,5 հաստիքային միավոր՝ մինչև 6 դասարանների միջին տարեկան թվի դեպքում,

- 1 հաստիքային միավոր՝ 6 և ավելի դասարանների միջին տարեկան թվի դեպքում։

գ. **Միջնակարգ դպրոցներում (նաև՝ կրթահամալիրներում և վարժարաններում)՝**

- 0,5 հաստիքային միավոր՝ մինչև 8 դասարանների միջին տարեկան թվի դեպքում,

- 1 հաստիքային միավոր՝ 8 և ավելի դասարանների միջին տարեկան թվի դեպքում։

Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հետ կապված աշխատանքների կատարումն իրականացվում է նախնական զինվորական պատրաստության և(կամ) անվտանգ կենսագործունեության ուսուցչի (զինղեկի) կողմից, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ տնօրենի հրամանով պարտականությունների կատարումը կարող է դրվել տնօրենի տեղակալ(ներ)ի կամ որևէ այլ աշխատողի վրա, ընդ որում, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հետ կապված աշխատանքների համար տրվող լրավճարի չափը հավասար է.

ա. **Ավագ դպրոցներում (նաև՝ մասնագիտացված և հատուկ դպրոցներում)՝**

- մինչև 4 դասարանների միջին տարեկան թվի դեպքում՝ դրույքաչափի համար սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 30 տոկոսին,

- 4 և ավելի դասարանների միջին տարեկան թվի դեպքում՝ դրույքաչափի համար սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսին։

բ. **Հիմնական դպրոցներում (նաև՝ տարրական և միջին դպրոցներում)՝**

- մինչև 6 դասարանների միջին տարեկան թվի դեպքում՝ դրույքաչափի համար սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 30 տոկոսին,

- 6 և ավելի դասարանների միջին տարեկան թվի դեպքում՝ դրույքաչափի

համար սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսին։

գ. **Միջնակարգ դպրոցներում (նաև՝ կրթահամալիրներում և վարժարաններում)՝**

- մինչև 8 դասարանների միջին տարեկան թվի դեպքում՝ դրույքաչափի համար սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 30 տոկոսին,

- 8 և ավելի դասարանների միջին տարեկան թվի դեպքում՝ դրույքաչափի համար սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսին։»:

4) գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 4-րդ մասի «**ա.** ընդհանուր ղեկավարման համար նախատեսվող հաստիքներ» բաժինը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

« **ա.** ընդհանուր ղեկավարման համար նախատեսվող հաստիքներ.

հհ	Հաստիքի անվանումը	Հաստիքի քանակը
1.	Տնօրեն	- 1 հաստիքայ հաստատությանը
2.	Վարչատնտեսական մասի համակարգող	- 1 հաստիքայ հաստատությանը (վս առանձնացված կառ
3.	Տնօրենի տեղակալ	- 0,5 հաստիքային մի 9 *(մասնագիտացված* *դպրոցների համար՝ ա* տարեկան թվի դեպքո - 0,75 հաստիքային մ *հատուկ և առանձին* *6-ից)* մինչև 18 *(մասն* *և առանձին ավագ դ* *12)* դասարանների մ - 1 հաստիքային միա *հատուկ և առանձին* մինչև 36 *(մասնագիտ* *ավագ դպրոցների հա* միջին տարեկան թվի - 1,5 հաստիքային մի *հատուկ և առանձին* մինչև 47 *(մասնագիտ* *ավագ դպրոցների հա* միջին տարեկան թվի - 2 հաստիքային միա

		հատուկ և առանձին
		ավելի դասարանների
4.	Տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ (նախկինում՝ դաստիարակչական աշխատանքի գծով տեղակալ)՝ մինչև վարչատնտեսական առանձնացված կառավարմանն անցնելը	- 0,5 հաստիքային մի 9 *(մասնագիտացված* *դպրոցների համար՝ ա* տարեկան թվի դեպքո - 0,75 հաստիքային մ *հատուկ և առանձին* *6-ից)* մինչև 18 *(մասն* *առանձին ավագ դպր* *12)* դասարանների մ - 1 հաստիքային միա *հատուկ և առանձին* մինչև 36 *(մասնագիտ* *ավագ դպրոցների հա* միջին տարեկան թվի - 1,5 հաստիքային մի *հատուկ և առանձին* մինչև 47 *(մասնագիտ* *ավագ դպրոցների հա* միջին տարեկան թվի - 2 հաստիքային միա *հատուկ և առանձին* ավելի դասարանների
5.	Տնօրենի տեղակալ ֆինանսատնտեսական գծով Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով համակարգող (նախկինում՝ դաստիարակչական աշխատանքի գծով տեղակալ)՝ վարչատնտեսական առանձնացված կառավարմանն անցնելու դեպքում	- 1 հաստիքային միա առանձնացված կառ - 0,5 հաստիքային մի 9 *(մասնագիտացված* *դպրոցների համար՝ ա* տարեկան թվի դեպքո - 0,75 հաստիքային մ *հատուկ և առանձին* *6-ից)* մինչև 18 *(մասն* *առանձին ավագ դպր* *12)* դասարանների մ - 1 հաստիքային միա *հատուկ և առանձին* մինչև 36 *(մասնագիտ* *ավագ դպրոցների հա* միջին տարեկան թվի - 1,5 հաստիքային մի *հատուկ և առանձին* մինչև 47 *(մասնագիտ*

ավագ դպրոցների հա
միջին տարեկան թվի

- 2 հաստիքային միա
հատուկ և առանձին
ավելի դասարանների

Որտեղ՝ ՆԱԱ-ն «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի չափն է (որի մեջ չեն ներառվում աշխատավարձից վճարվող հարկերը, սոցիալական կամ օրենքով սահմանված պարտադիր այլ վճարները)։

Ընդ որում, 9-ից մինչև 25 դասարանների տարեկան միջին թվի դեպքում տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի դրույքաչափի նկատմամբ կիրառելի է 1,21 գործակիցը, 25-ից մինչև 47 դասարանների միջին տարեկան թվի դեպքում՝ 1,46 գործակիցը, 47 և ավելի դասարանների միջին տարեկան թվի դեպքում՝ 1,78 գործակիցը։ Առանձին ավագ դպրոցների, մասնագիտացված և հատուկ ուսումնական հաստատության դեպքում տնօրենի սույն կետով հաշվարկված մեծության նկատմամբ կիրառելի է նաև 1,27 գործակիցը, իսկ վարչատնտեսական մասի համակարգողի դրույքաչափի նկատմամբ՝ 1,07 գործակիցը։»,

5) գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 4-րդ մասի «**բ.** հաստատության հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական գործունեության համար նախատեսվող հաստիքներ» բաժնի «4. գնումների համակարգող» տողը «-0,5 հաստիքային միավոր» բառերից առաջ լրացնել «- 0,3 հաստիքային միավոր՝ մինչև 27 դասարանների միջին տարեկան թվի դեպքում,» բառերով,

6) գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 4-րդ մասի «**բ.** հաստատության հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական գործունեության համար նախատեսվող հաստիքներ» բաժինը «մասնագիտացված և հատուկ ուսումնական հաստատությունների դեպքում՝» բառերից հետո լրացնել «սույն կետով հաշվարկված մեծության նկատմամբ կիրառելի է» բառերով,

7) գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 4-րդ մասի «**գ**. հաստատությունում ուսուցիչ չհամարվող մանկավարժական աշխատանքների համար նախատեսվող հաստիքներ» բաժինը «Ուսուցչի օգնական» բառերից հետո լրացնել «/բացառությամբ հատուկ ուսումնական հաստատությունների/» բառերով,

8) գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 4-րդ մասի «**գ**. հաստատությունում ուսուցիչ չհամարվող մանկավարժական աշխատանքների համար նախատեսվող հաստիքներ» բաժնի «Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ» բառերը փոխարինել «Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ (նախկինում՝ մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպիչ)՝ մինչև վարչատնտեսական առանձնացված կառավարմանն անցնելը» բառերով,

9) գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 4-րդ մասի «**գ**.

հաստատությունում ուսուցիչ չհամարվող մանկավարժական աշխատանքների համար նախատեսվող հաստիքներ» բաժնի 6-րդ տողից հանել «էրգոթերապիստ» բառը,

10) գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 4-րդ մասի «**գ**. հաստատությունում ուսուցիչ չհամարվող մանկավարժական աշխատանքների համար նախատեսվող հաստիքներ» բաժինը լրացնել նոր 7-ից 9-րդ տողերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

7.	Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ	- 0,5 հաստիքային միավոր՝ մի միջին տարեկան թվի դեպքում - 1 հաստիքային միավոր՝ 9-ից միջին տարեկան թվի դեպքում - 1,5 հաստիքային միավոր՝ 36 միջին տարեկան թվի դեպքում
8.	Խմբակավար	- հատուկ և մասնագիտացված հաստիքային միավոր՝ յուրաք հաշվարկով */լիազոր մարմնի հ ձևավորման կարգին համապա*
9.	Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների համակարգող (նախկինում՝ մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպիչ)՝ վարչատնտեսական առանձնացված կառավարմանն անցնելու դեպքում	- 0,5 հաստիքային միավոր՝ մի միջին տարեկան թվի դեպքում - 0,75 հաստիքային միավոր՝ 9 դասարանների միջին տարեկա - 1 հաստիքային միավոր՝ 18-ի դասարանների միջին տարեկա - 1,5 հաստիքային միավոր՝ 36 միջին տարեկան թվի դեպքում

»,

11) գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 4-րդ մասի «դ. հաստատությունում կադրային գործի իրականացման, գործավարության և փաստաթղթաշրջանառության աշխատանքների համար նախատեսվող հաստիքներ» բանժնում «Կադրերի գծով տեսուչ» բառերը փոխարինել «Անձնակազմի կառավարման մասնագետ» բառերով

12) ուժը կորցրած ճանաչել գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 4-րդ մասի «դ. հաստատությունում կադրային գործի իրականացման, գործավարության և փաստաթղթաշրջանառության աշխատանքների համար նախատեսվող հաստիքներ» բաժնի «2. Օպերատոր» տողը,

13) գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 4-րդ մասի «ե. հաստատությունում լաբորատորիաների և խմբակների կազմակերպման,

աջակցության և բժշկական օգնության տրամադրման աշխատանքների իրականացման համար նախատեսվող հաստիքներ» բաժնի վերնագրից հանել «և խմբակների» բառերը, իսկ «3. Դաստիարակ» տողը «սաներ ունեցող» բառերից հետո լրացնել «հատուկ և մարզառազմական ուղղվածությամբ մասնագիտացված» բառերով, իսկ «յուրաքանչյուր դասարանի հաշվարկով» բառերից հետո՝ «՝ բացառությամբ ուսուցչի օգնական ունեցող հաստատությունների» բառերով,

14) ուժը կորցրած ճանաչել գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 4-րդ մասի «ե. հաստատությունում լաբորատորիաների և խմբակների կազմակերպման, աջակցության և բժշկական օգնության տրամադրման աշխատանքների իրականացման համար նախատեսվող հաստիքներ» բաժնի «6. Խմբակավար» տողը,

15) գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 4-րդ մասի «ե. հաստատությունում լաբորատորիաների և խմբակների կազմակերպման, աջակցության և բժշկական օգնության տրամադրման աշխատանքների իրականացման համար նախատեսվող հաստիքներ» բաժնի «4. Գիշերային դայակ կամ գիշերային դաստիարակ» տողի «- 4 հաստիքային միավոր՝ մինչև յուրաքանչյուր 60 գիշերակացով սանի համար» բառերը փոխարինել «- 4 հաստիքային միավոր՝ մինչև 60 գիշերակացով սովորողի դեպքում, - 6 հաստիքային միավոր՝ 60-ից մինչև 100 գիշերակացով սովորողի դեպքում, - 8 հաստիքային միավոր՝ 100-ից մինչև 150 գիշերակացով սովորողի դեպքում,- 10 հաստիքային միավոր՝ 150 և ավելի գիշերակացով սովորողի դեպքում» բառերով,

16) գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 4-րդ մասի «ե. հաստատությունում լաբորատորիաների և խմբակների կազմակերպման, աջակցության և բժշկական օգնության տրամադրման աշխատանքների իրականացման համար նախատեսվող հաստիքներ» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7-րդ ենթակետով.

«

7.	Ուղեկցող	- հաստատության տեղակայման վ բնակավայրից հաստատություն և հակառակ r մանկավարժական աշխատողներին աշխատա փոխադրամիջոցների առկայության դեպքում՝ համապատասխան

»,

17) գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 4-րդ մասի «**ը.** հաստատությունում շենքերի (շինությունների) և հարակից տարածքների պահպանման, խնամքի և կենցաղային սպասարկման աշխատանքների համար նախատեսվող հաստիքներ» բաժնի «3. Հավաքարար» տողում «մինչև 600 քառ.մ-ի մաքրման համար» բառերից հետո լրացնել «, բայց ոչ ավելի, քան դասարանների միջին տարեկան թվի և 6,5 թվի քանորդի չափով», բառերով, «առկայությամբ» բառից հետո լրացնել «մասնագիտացված» բառով, իսկ «5. Լվացող-արդուկող» տողը «լվացքատան առկայության դեպքում» բառերից

առաջ լրացնել «գիշերակացով աշակերտների և» բառերով,

18) գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 4-րդ մասի «**թ.** Մասնագիտացված և հատուկ դպրոցներում սննդի տրամադրման աշխատանքների համար նախատեսվող հաստիքներ» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«Սննդով սաներ չունեցող և «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրից օգտվող և համապատասխան խոհանոցային պայմաններ ունեցող հաստատությունների սովորողներին օրական մեկանգամյա տաք սնունդ տրամադրելու նպատակով նախակրթարաններում և տարրական դասարաններում սովորողների թվի հիման վրա նախատեսվում է խոհարարի հաստիքներ հետևյալ չափով.

հհ	Հաստիքի անվանումը	Հաստիքի քանակը	դրույքաչա
1.	Խոհարար	- 0,5 հաստիքային միավոր՝ մինչև 60 օրական միջին սնվող սաների թվի դեպքում, - օրական միջին սնվող սաների թիվ/120 հաստիքային միավոր՝ մինչև 60 օրական միջին սնվող սաների թվի դեպքում	ՆԱԱ

Տվյալ դեպքում օրական մեկանգամյա տաք սննդի գումարը հաշվարկվում է 151 դրամ յուրաքանչյուր սնվող սովորողի հաշվարկով, իսկ խոհանոցային ոչ բավարար պայմանների դեպքում օրական մեկանգամյա չոր սննդի գումարը հաշվարկվում է 171 դրամ յուրաքանչյուր սնվող սովորողի հաշվարկով։

Ուսումնական տարվա ընթացքում օրերի առավելագույն թիվը 5-օրյա ուսումնական շաբաթի դեպքում նախակրթարանում, 3-րդ և 4-րդ դասարաններում ընդունվում է հավասար 170-ի, 1-ին դասարանում՝ 150-ի, 2-րդ դասարանում՝ 160-ի, իսկ 6-օրյա ուսումնական շաբաթի դեպքում նախակրթարանում, 3-րդ և 4-րդ դասարաններում ընդունվում է հավասար 204-ի, 1-ին դասարանում՝ 180-ի, 2-րդ դասարանում՝ 192-ի»։

19) գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 9-րդ մասի «ի. հաշմանդամություն ունեցող երեխաների համար ֆիզիկական միջավայրի հարմարեցումների համար նախատեսված ծախսերը» ենթակետը «գույքի» բառից հետո լրացնել «կառուցում, վերակառուցում,» բառերով,

20) գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 9-րդ մասի «ծ. համազգեստի համար նախատեսված ծախսերը» ենթակետը «մարզառազմական» բառից հետո լրացնել «և մարզական» բառերով,

21) գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 9-րդ մասի «կ. այլ ծախսերը» ենթակետի «185900» թիվը փոխարինել «45000» թվով, «1,35» թիվը՝ «2,0» թվով, «1,5» թիվը՝ «3,0» թվով,

- գործակիցների և նորմատիվների 3-րդ կետը լրացնել նոր 4)-րդ, 5)-րդ, 6)-րդ և 7)-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4) որպես սույն հրամանով սահմանված գործակիցների և նորմատիվների հաշվարկման համար անհրաժեշտ խբերի և սովորողների թիվ հիմք են ընդունվում կազմակերպությունների կողմից հունվար և սեպտեմբեր ամիսների երրորդ շաբաթվա առաջին աշխատանքային օրվա ավարտին կրթության կառավարման տեղեկատվական համակարգ մուտքագրված տվյալները,

5) հաստատությունների ֆինանսավորման հաշվարկն իրականացվում է կրթության կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով,

6) ավագ, միջնակարգ դպրոցներում և վարժարաններում խմբային ուսուցման դեպքում խմբերի թիվը որոշվում է մինչև 13 աշակերտը մեկ խումբ հաշվարկով,

7) ազատազրկված և միջնակարգ կրթություն չունեցող անձանց շրջանակում հանրակրթական ծառայությունների մատուցման համար ՈՈՒԱա-ն (ոչ ուսուցչական անձնակազմի ամսական աշխատավարձի ֆոնդը) հաշվարկվում է ընդհանուր ղեկավարման համար նախատեսվող հաստիքների, հաստատության հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական գործունեության համար նախատեսվող հաստիքների և հաստատությունում ուսուցիչ չհամարվող մանկավարժական աշխատանքների համար նախատեսվող հաստիքների համար նախատեսված գործակիցների ու նորմատիվների նկատմամբ կիրառելով 0,5 գործակիցը, իսկ ՀԴծ (համադպրոցական ծախեր) չի հաշվարկվում»։

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից։

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**